## Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի << Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ռուսերենով ուսուցմամբ III դասարանի դասվարի (15 ժամ) և ռուսերենով ուսուցմամբ դասարանների << Ֆիզիկա>> առարկայի (6 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար .

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթներին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 7 հիմնական դպրոցում, (հասցեն՝ ք. Գյումրի, Ալեք Մանուկյան 4 ).

Ռուսերենով ուսուցմամբ երրորդ դասարանի դասվար՝ *նոյեմբերի 6-ին ՝ժամը 14:00- ին*
Ռուսերենով ուսուցմամբ դասարանների ֆիզիկա ՝ *նոյեմբերի 6-ին ՝ժամը 14:00- ին*

Տեղեկությունների համար զանգահարել (094) 44 34 84, 0312- 5-06-68 ,0312- 5-12-02 հեռախոսահամարով: